

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆՑ ԱԶԱՏ ԼԻՆԵԼԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆՂՅԱՆ

Յուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը սահմանադրաիրավական այն հիմքերից է, որը քրեական դատավարությունում առանձնացված է որպես ինքնուրույն սկզբունք, որը բխում է այն տրամաբանությունից, որ կիրառվում է քրեական դատավարության գրեթե բոլոր փուլերում, քանի որ ուղղակի կապված է ապացուցման գործընթացի հետ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթներում:

Պետք է նշել, որ «ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներից է: Այն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի (16 դեկտեմբերի 1966 թ.) 14 հոդվածի 3-րդ մասի (է) կետով, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա:

է) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու»:

Այս սկզբունքը չնայած ուղղակի ամրագրված չէ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, սակայն Եվրոպական դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներում այն քննարկել է 6 հոդվածի շրջանակներում՝ որպես արդար դատական քննության իրավունքի մաս: Այսպես, *Funke v France* (1993 թ.) գործով, որի էությունն այն էր, որ դիմողը հրաժարվել էր ներկայացնել իրավաբանական բնույթի փաստաթղթեր, որոնք չէին հայտնաբերվել օրինական խուզարկությամբ, և տուգանվել էր դրա համար: Եվրոպական դատարանը նշված գործով արտահայտեց հստակ կարծիք, որ իր դեմ ցուցմունք չտալը և դրա հետ միասին՝ լռելու իրավունքը արդար դատական քննության իրավունքի մասն են: Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը նպաստում է կանխելու քրեական հետապնդումն այն ապացույցների հիման վրա, որոնք ձեռք են բերվել անձի կամքին հակառակ:

Եվրոպական դատարանը զարգացրեց իր իրավական դիրքորոշումը *Saunders v. the United Kingdom* (1996 թ.) գործով, որտեղ կազմակերպության աշխատակցից պահանջել էին փաստաթղթեր ներկայացնել պետական մարմնին իր կազմակերպության գործունեության մասին, որոնք հետագայում ուղարկել էին դատախազություն՝ տվյալ աշխատակցի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար: Եվրոպական դատարանի կողմից սա նույնպես գնահատվեց որպես ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքի խախտում:

Նշված իրավունքների հոչակումը նպատակ է հետապնդում ապահովելու մեղադրյալի իրավունքների պաշտպանությունն իշխանության չարաշահումներից և հասնելու այն նպատակներին, որոնք դրված են 6 հոդվածի հիմքում: Մասնավորապես, նշված իրավունքը նպաստում է, որ մեղադրանքի կողմը, մեղադրյալի կամքին հակառակ, բռնության կամ ճնշման միջոցով ապացույցներ ձեռք չբերի¹:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը վերաբերում է միայն բանավոր ցուցմունքներ տալուն, ինչպես նաև նյութեր տրամադրելուն: Ինչ վերաբերում է մյուս ապացույցներին, որոնք կարող են մեղադրյալից ստանալ, օրինակ՝ արյուն, մազ, մաշկի նմուշ, ապա դրանք կարող են ձեռք բերվել նաև հարկադրաբար և օգտագործվել որպես ապացույց:

Որոշ երկրների օրենսդրությամբ վարույթն իրականացնող մարմնի հարցերին չպատասխանելու իրավունքը բացարձակ չէ: Այսպես, Անգլիայում և Ուելսում հարցերին չպատասխանելու իրավունքը սահմանափակվում է հետևյալ կերպ. եթե կասկածյալը հարցաքննության ընթացքում չի պատասխանում հարցերին, բայց հետագայում հենվում է այն փաստերի վրա, որոնք չի նշել հարցաքննության ընթացքում՝ ի պաշտպանություն իրեն, դատարանը կարող է երդվյալների առաջարկել այդ լռությունից հետևություն անել ոչ հօգուտ կասկածյալի: Վերջինս պետք է իրազեկված լինի հարցերին չպատասխանելու իր իրավունքի մասին, բայց միաժամանակ նրան պետք է տեղեկացնել այդ իրավունքն օգտագործելու հնարավոր հետևանքների մասին²:

Իհարկե, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության իրավական կարգավորման մեջ բացակայում է դատարանի կողմից նման գնահատական տալը, քանի որ այդ օրենսգրքի 336 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամբաստանյալին պարզաբանվում է, որ նա իրավունք ունի ցուցմունքներ չտալ, և դա չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա: Այսինքն՝ դատավճիռ կայացնելիս, ելնելով արդար դատաքննութ-

¹ St' u **Моул Н., Харби К., Алексеева Л. Б.** Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 – право на справедливое судебное разбирательство, прецеденты и комментарии. М., 2001, էջ 69-71:

² St' u **Виткукас, Шини Л.-Э.** Право на справедливый суд в рамках Европейской конвенции о защите прав человека (статья 6), Руководство для юриста, М., 2009, էջ 54:

յան անձի իրավունքից, դատարանը չի կարող դատավճռում հետևություններ անել անձի մեղավորության վերաբերյալ՝ հենվելով այն բանի վրա, որ մեղադրյալը լռել է: Մեղադրյալի լռելու հետ կապված գնահատական տալիս դատարանը պետք է շատ զգույշ լինի, քանի որ ցուցմունք չտալը համարվում է նրա պաշտպանության իրավունքներից մեկը, որը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը պետք է գնահատել որպես անձի սուբյեկտիվ իրավունք, որի իրականացումը թողնված է նրա հայեցողությանը: Նշված իրավունքի առկայությունը բացառում է անձին ցուցմունք տալ պարտավորեցնելը:

Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված են ցուցմունք չտալու այլ դեպքեր, բայց նշված իրավունքից դրանք տարբերվում են նրանով, որ քրեադատավարական օրենսդրությունը ընդհանրապես բացառում է նշված անձանց հարցաքննելու հնարավորությունը. խոսքը մասնավորապես վերաբերում է ՀՀ քր. դատ. օր.-ի 86 հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն անձանց, ովքեր չեն կարող հարցաքննվել որպես վկա: Այսինքն՝ եթե նշված անձինք ցանկություն հայտնեն ցուցմունք տալու, ապա վարույթն իրականացնող մարմինը չի կարող նրանց հարցաքննել:

Ընդհանրապես ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը վերապահված է միայն կասկածյալին և մեղադրյալին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկացած հաղորդում, որն արվում է նշված անձանց կողմից, կարող է դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել նրանց դեմ³: Դրանից հետևում է, որ անձն իրավունք ունի ցուցմունք չտալ՝ նախ՝ իր դեմ, այսինքն՝ ինքն իրեն չմերկացնել հանցագործության մեջ, երկրորդ՝ ցուցմունք չտալ ամուսնու և մերձավոր ազգականների դեմ:

Երկրորդ դեպքում խնդիրն ավելի բարոյահոգեբանական բնույթի է, և օրենսդրի նպատակն է հանրային շահերից վեր դասել անձնական և ընտանեկան հարաբերությունները և բացառել նշված անձնաց միմյանց դեմ հարկադրաբար ցուցմունք տալը: Ա. Ֆ. Կոնին այս առիթով գրել է. «Հանուն երկրային արդարադատության նպատակների չի կարելի թուլացնել կամ խախտել մարդկանց միավորող սրբազան կապերը: Օրենքը խնայում է այն զգացմունքները, որոնք անգամ ամբաստանյալի մեղավորությունը կամ նրան մերկացնող փաստերի առկայությունը վկայի կողմից գիտակցելիս հաճախ ստիպում են ցուցմունքներ տվողի սիրտը արցունքով ու արյունով լցվելու կամ ստի մեջ փնտրելու իր վիճակի թեթևացումը: Արյան խորհրդավոր կանչին կամ ամուսնական նվիրվածությանն ուղղված օրենքի մարդկային հայացքի ծիրում կարծես թե նույնիսկ թույլատրելի է սուտը, որը որոշ դեպքե-

³ Տե՛ս (Funke v. France), կետ 44, (O'Halloran and Francis v. the United Kingdom [GC]), կետ 45, (Saunders v. the United Kingdom), կետ 60):

րում ավելի հարագատ է կյանքի ներքին ճշմարտությանը, քան օբյեկտիվ ու սառը ճշմարտությունը»⁴:

Մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալը նպատակ է հետապնդում պաշտպանելու ներքնտանեկան արժեքները, քանի որ ընտանիքի անդամները, միմյանց դեմ ցուցմունք տալով, կարող են էական վնաս հասցնել ընտանեկան հարաբերություններին: Պետությունը պարտավոր է նպաստել ընտանեկան հարաբերությունների պահպանմանը և չստեղծել խոչընդոտներ դրանց արդյունավետ գործունեության համար:

Ցուցմունք չտալու հետ կապված առկա են մի շարք խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Հիմնական խնդիրներից մեկը հանցագործության կատարման մեջ կասկածվող անձին որպես վկա հարցաքննելիս ինքնամերկացումից ազատ լինելու իրավունքի մասին տեղեկացնելն է, ինչպես նաև ցուցմունք չտալու համար կամ ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու մասին նրան նախազգուշացնելը: Իհարկե, հանցագործության մեջ կասկածվող վկային սխալ է հարցաքննել քրեական պատասխանատվության սպառնալիքով: Բոլոր այն դեպքերում, երբ վկան տալիս է ինքնամերկացնող ցուցմունք, վարույթն իրականացնող մարմինը պետք է դադարեցնի տվյալ անձի հարցաքննությունը և նրան համապատասխան կարգավիճակ տա՝ առաջին հերթին ապահովելով Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 67 հոդվածով նախատեսված մեղադրանքից պաշտպանվելու հիմնական իրավունքներն իրացնելու հնարավորություն: Փաստացի քրեական հետապնդման ենթարկված վկային նման իրավունքներ չապահովելը և որպես վկա հարցաքննությունը շարունակելը կհանգեցնեն ձեռք բերված ցուցմունքների անթույլատրելիության: Տվյալ դեպքում վկային քրեական հետապնդման ենթարկելը համարվում է Եվրոպական կոնվենցիայի խախտում:

Չնայած այն բանին, որ ցուցմունք չտալու կամ լռելու իրավունքը որևէ բացառություն չի ենթադրում, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ վարույթն իրականացնող դատավարության հանրային մասնակիցները ցուցմունք տալուց հրաժարվելու կապակցությամբ մեղադրյալից պահանջում են բացատրություն, թե ինչու է հրաժարվում ցուցմունքներ տալուց: Այս իրավունքը պետք է պաշտպանվի ոչ միայն քննիչի կամ դատարանի կողմից, այլև հանրային քրեական հետապնդում իրականացնող մյուս սուբյեկտների կողմից: Այն հատկապես կարևոր է ոստիկանության աշխատակիցների համար, որոնք առաջինն են առնչվում ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ: Այսօր այդպիսի պարտականություն չի սահմանված հետաքննության մարմինների համար, որոնք իրականացնում են ձերբակալում կամ են-

⁴ Кони А. Ф. Нравственные начала в уголовном процессе // Собр. соч. Т. 4. М., 1967, с. 52.

թաղրյալ հանցանք կատարած անձին բերման են ենթարկում: Իհարկե, օրենսդրական այս բացը հակասում է ՀՀ Սահմանադրության 65 հոդվածին, որում ուղղակի սահմանված է. «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»: Պետք է նշել, որ սահմանադրական այս դրույթը կիրառվում է քրեական դատավարության բոլոր փուլերում: Այս առումով ողջունելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումն այն մասին, որ ձերբակալված անձը մինչև մեղադրյալին վերաբերելի իրավունքներ ձեռք բերելն ունի նվազագույն իրավունքներ, որոնցից է՝ (...)

2) պահպանել լռություն, (...):

«Միրանդայի կանոնների» համաձայն՝ անձը լռելու իրավունքի մասին պետք է իրազեկվի ռուսիկանության հետ առաջին իսկ շփվելուց: Ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական քննության փուլերում անձին չի կարելի հարկադրել ինքնամերկացնող ցուցմունքներ տալու: Նշված իրավունքի իրացման համար կարևոր երաշխիք է այն պահանջը, որ մեղադրյալի լռելու իրավունքը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Լ. Մ. Կարնեևան և Ի. Կերտեւը այն դատավարագետներից են, որոնք առավել մանրամասն են հետազոտել վկայի իմունիտետի հիմնահարցերը: Նրանք առաջարկում են մտցնել օրենքով նախատեսված դեպքերում ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը: Նրանց կարծիքով, վկայի իմունիտետը վկայի իրավունքն է՝ հրաժարվել տալու այնպիսի ցուցմունքներ, որոնք կարող են քրեական դատավարությունում օգտագործվել ի վնաս մերձավոր ազգականի կամ այլ մերձավոր անձի⁵: Իհարկե, նման առաջարկությունն արդիական է, բայց անձանց շրջանակի հետ կապված՝ անրնդունելի է, որովհետև այդ շրջանակում ընդգրկում են նաև «մերձավոր անձանց», որի մեջ կարող են մտնել նաև շատ այլ անձինք: Նման մեկնաբանությունը, կարծում ենք, չի կարող նպաստել հանրային շահի պաշտպանությանը, և դա պրակտիկայում կարող է հանգեցնել լուրջ դժվարությունների՝ կապված հանցագործությունների բացահայտման հետ:

Դատավարական գրականության մեջ ավելի շատ է խոսվում վկայի իմունիտետի մասին, բայց նման ձևակերպումը էապես սահմանափակում է այս ինստիտուտի կիրառման շրջանակը, որովհետև այն ավելի շատ վերաբերում է վկային: Կարծում ենք, որ ավելի արդարացի է քրեական դատավարությունում տեղ գտած կարգավորումը, այսինքն՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը:

⁵ St' u Корнеева Л. М., Кергэс И. Проблемы свидетельского иммунитета // "Советское государство и право", 1989, № 6, էջ 57:

Անձի կողմից իր դեմ ցուցմունք չտալը քրեական հետապնդումից պաշտպանվելու կարևոր երաշխիքներց է, որի բացակայությունը նշանակում է, որ եթե անձը ինքնամերկացնող ցուցմունք է տվել, ապա դա պետք է լինի միայն կամավոր և ոչ թե հարկադրանքի ազդեցության տակ: Քրեական դատավարության գործող օրենսդրությունը պատասխանատվություն չի նախատեսում կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կեղծ ցուցմունք տալու համար, իսկ դա նշանակում է, որ նրանք կարող են իրենց հայեցողությամբ կազմակերպել իրենց պաշտպանությունը:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը կարելի է դասակարգել երկու տեսակի՝ լրիվ և մասնակի: Ցուցմունք տալու պարտականությունից լրիվ ազատ լինել ասելով հասկանում ենք այն, որ անձն ընդհանրապես հրաժարվում է ցուցմունք տալուց (օրինակ՝ կասկածյալը և մեղադրյալը): Մա ըստ էության նման է լռելու իրավունքին: Ցուցմունք տալու մասնակի ազատության դեպքում անձն ազատվում է ցուցմունք տալուց մի մասով, այսինքն՝ այն մասով, որը չի վերաբերում գործի հանգամանքներին և որնէ վտանգ չի կարող ներկայացնել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի համար: Դրանք կարող են լինել ընդհանուր բնույթի տեղեկություններ, որոնք չեն կարող օգտագործվել նրա և վերը նշված անձանց դեմ: Սրանով է հենց պայմանավորված նշված իրավունքի ճիշտ ձևակերպումը: Մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները նշված իրավունքը ՀՀ Սահմանադրությունում (1995 թ.) ներկայացվում էր որպես «... իր, ամուսնու և մերձավոր ազգականների **դեմ**» ձևակերպմամբ, իսկ սահմանադրական փոփոխություններից հետո «**դեմը**» փոխարինվեց «վերաբերյալ» բառով:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումներում այս իրավունքը կրկին ենթարկվեց փոփոխության և ամրագրվեց հետևյալ խմբագրությամբ. «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»: Նշված փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ անկախ ցուցմունքի առարկայից՝ վկան հաճախ հրաժարվում էր ցանկացած բնույթի տեղեկություններ հաղորդելուց վարույթն իրականացնող մարմնին՝ պատճառաբանելով, որ դա վերաբերում է իրեն կամ իր մեծավոր ազգականին: Նման իրավական կարգավորումն անկասկած գործնականում բավական դժվարություններ էր առաջացնում գործին վերաբերող ցանկացած բնույթի տեղեկություններ ստանալու հարցում: Կարծում ենք, որ սահմանադրական վերը նշված նոր կարգավորումը կարող է այս խնդրին որոշակի լուծում տալ: Այդ կարգավորումն առավել ընդունելի է ինչպես մասնավոր շահերի,

այնպես էլ հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից: Այսինքն՝ վկան չի կարող յուրաքանչյուր դեպքում հրաժարվել ցուցմունք տալուց՝ պատճառաբանելով, որ դա իր կամ իր մերձավորի վերաբերյալ է, անկախ այն բանից՝ դա իր կամ իր մերձավոր ազգականի դեմ կարող է օգտագործվել, թե ոչ:

Բոլոր դեպքերում սահմանադրական այս կարգավորումը չպետք է հասկանալ որպես անձի ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքի սահմանափակում: ՀՀ Սահմանադրության մեջ այս իրավունքի իրացման շրջանակը ոչ թե սահմանափակվել է, այլ հստակեցվել: Սահմանադրական այս իրավունքը պետք է մեկնաբանել այն իմաստով, որ նշված իրավունքի իրացումը ենթադրում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ոչ միայն ուղղակի մերկացնող բնույթ կրող, այլև այնպիսի փաստերի մասին ցուցմունք տալուց անձի հրաժարվելը, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի, անմիջականորեն կամ միջնորդավորված օգտագործվել շահագրգիռ անձանց դեմ:

Իհարկե, ինդիր կարող է առաջանալ այն դեպքում, երբ թվում է, թե առաջադրված հարցը և դրան տրվող պատասխանը վկայի կամ նրա մեծավոր ազգականի դեմ չեն կարող օգտագործվել, բայց հետագայում պարզվում է, որ դրանք տվյալ կամ մեկ այլ գործով կարող են նման նշանակություն ունենալ: Այս դեպքում հարց է առաջնում, թե այդ տեղեկությունները, որոնք հետագայում կրելու են մերկացնող բնույթ, կարող են արդյոք օգտագործվել ցուցմունք տվող անձի կամ նրա մերձավոր ազգականների դեմ: Կարծում ենք, որ սկզբունքի գաղափարից ելնելով՝ դրանք չպետք է օգտագործվեն, եթե, իհարկե, անձը հետագայում չի հրաժարվում իր այդ ցուցմունքներից: Եթե դատաքննության ընթացքում վկան հրաժարվում է այդ փաստերի վերաբերյալ տեղեկություններ հաղորդել՝ գտնելով, որ դրանք իր կամ իր մերձավոր ազգականների դեմ են, ապա դատարանն իրավունք չունի հրապարակելու նախաքննության ընթացքում նրա կողմից տրված ցուցմունքները կոնկրետ այդ փաստական հանգամանքների մասին:

Նշված իրավունքի իրացման առումով կարևոր է նաև այն հարցը, թե վկան կարող է արդյոք քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե հրաժարվում է ցուցմունք տալ՝ ենթադրելով, որ այդ տեղեկությունները կարող են օգտագործվել իր կամ իր մերձավոր ազգականների դեմ, սակայն հետագայում պարզվում է, որ այդ տեղեկությունները չէին կարող օգտագործվել այդ նպատակով: Կարծում ենք, որ եթե գործի հանգամանքները վկային նման ենթադրություն անելու բավարար հիմքեր են տալիս, ապա նա չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության:

Քննարկվող իրավունքը պահպանվում է քրեական դատավարության բոլոր փուլերում, մասնավորապես նաև քրեական գործի հարուց-

ման փուլում: Թեև այս փուլում անձի հարցաքննություն չի թույլատրվում, բայց ՀՀ քր. դատ. օր.-ի 180 հոդվածի համաձայն՝ անձից կարող են բացատրություններ վերցվել: Քրեական դատավարության օրենսդրությունը չի սահմանում բացատրություններ վերցնելու դատավարական կարգը, բայց պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարույթն իրականացնող մարմինները բացատրություններ վերցնելիս անձին այս իրավունքի մասին հիմնականում տեղեկացնում են, չնայած այն բանին, որ բացատրությունները ապացույց չեն: ՀՀ Սահմանադրության 65 հոդվածում տեղ գտած կարգավորումից հետևում է, որ «Ոչ ոք ... » արտահայտությունը վերաբերում է ցանկացած անձի՝ անկախ նրա դատավարական կարգավիճակից: Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվում է «ցուցմունք տալ» հասկացությունը, իսկ քրեական դատավարության օրենսդրությունը նախատեսում է նաև անձից բացատրություններ վերցնելու հնարավորություն: Այս հանգամանքը չի նշանակում, որ անձից կարելի է բացատրություններ վերցնել առանց սահմանադրական նորմի իրազեկման: Սահմանադրության մեջ օգտագործվող «ցուցմունք» հասկացությունը պետք է հասկանալ լայն իմաստով, այսինքն՝ անձի կողմից հաղորդվող ցանկացած տեղեկություն: Այսինքն, եթե բացատրությունները կամ ցուցմունքները կարող են ենթադրյալ հանցագործության կատարման մեջ անձին կասկածելու կամ մեղադրելու հիմք լինել, ապա ցանկացած անձ, անկախ իր դատավարական կարգավիճակից, կարող է հրաժարվել բացատրություններ կամ ցուցմունքներ տալուց⁶: Իհարկե, նշված իրավունքից օգտվելու համար անձը պետք է անպայման իրազեկված լինի ՀՀ Սահմանադրության 65 հոդվածի մասին, այլապես նա չի կարող իրացնել այս հիմնական իրավունքը:

Եթե բացատրությունները կամ ցուցմունքները կարող են անձին ենթադրյալ հանցագործության մեջ կասկածելու կամ մեղադրելու հիմք լինել, ապա ցանկացած անձ, անկախ քրեական դատավարությունում ունեցած իր կարգավիճակից, իրավունք ունի հրաժարվելու ցուցմունքներ տալուց, իսկ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատարանն իրավունք չունեն ստիպելու անձին ընդունելու իր մեղավորությունը և տալու ցուցմունքներ կամ բացատրություններ:

Նշված սկզբունքն անկասկած կապված է ապացույցների թույլատրելիության հետ: Եթե անձի հարցաքննությունն իրականացվել է ՀՀ Սահմանադրության 67 հոդվածով նախատեսված իրավունքի խախտմամբ, ապա ձեռք բերված ցուցմունքները չեն կարող ապացուցողական նշանակություն ունենալ: Պետք է նշել, որ ապացույցն անթույլատրելի ճանաչելու նման հիմք ուղղակի նախատեսված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 97 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, որի համաձայն՝ «... օրենքի էական խախտմամբ են համարվում

⁶ Տե՛ս (John Murray v. the United Kingdom), կետ 45):

ձեռք բերված այն տվյալները, որոնք ստացվել են մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու»: Քրեադատավարական օրենսդրության մեջ նման նորմի առկայությունն անհրաժեշտություն է, որպեսզի անձն անհիմն քրեական հետապնդման չենթարկվի: Նշված նորմի առկայությունը կբացառի հանցագործության մեջ կասկածվող անձանց որպես վկա հարցաքննելու հնարավորությունը:

Բանալի բառեր – սկզբունք, ցուցմունք, պարտականություն, ազատ լինել, մեղադրյալ, վկա, ինքնամերկացում

SAMVEL DILBANDYAN – Освобождение от обязанности давать показания как конституционная основа уголовного процесса. – Освобождение от дачи показаний – одна из конституционных основ, которая представляется самостоятельным принципом уголовного процесса. Данное право не раз подвергалось изменениям в ходе конституционных реформ, проведённых в Армении. Оно получило новое нормативное урегулирование в статье 65 Конституции РА. В частности, исходя из соотношения государственных и частных интересов, были уточнены границы его применения.

Ряд проблем, связанных с отказом от дачи показаний, всё ещё требуют решения и рассмотрены в статье. В их числе извещение лица, подозреваемого в совершении преступления, право не свидетельствовать против самого себя, а также предупреждение об уголовной ответственности за дачу заведомо ложных показаний либо отказа от них.

Ключевые слова: принцип, показания, обязанность, быть свободным, обвиняемый, свидетель, самооговор

SAMVEL DILBANDYAN – Release from the Obligation to Testify as a Constitutional Ground of Criminal Procedure. – Release from the obligation to testify is one of the constitutional grounds which is prescribed as an autonomous principle of criminal procedure. This constitutional right of a person has been subject to numerous amendments in the course of the RA constitutional reforms. It has got a new legislative regulation in Article 67 of the RA Constitution. In particular, the scopes of application of this rule were clarified based on correlation of private and public interests.

There are several problems regarding the refusal to testify which need solution. In particular, the article has turned to the issue of informing the suspect of the right not to incriminate himself and of the criminal liability for false testimony or for a refusal to give testimony.

Key words: principle, testimony, obligation, to be free, defendant, witness, self-incrimination